իսկ Ճացողները պարտաւոր են գրամական օգնութիւն հասցնել։ Այդ վնասից յետոյ ժողովին ներկայ եղողները ուղեւորվեցան սուլթանի պալատը, որպէս զի յայտնեն նրան իրանց հայրենասիրական վճիռը, բայց սուլթանի ադիւտանտը շուտով հասաւ և արգելից ամբոխին իրագործել իր մտադրութիւնը, որովհետև մի կողմից սուլթանը չէ սիրում, որ իր պալատի առաջ ամբոխ հաւաքվի, միւս կողմից նա չէր կարող բացարձակ քաջալերել այրանցիներին։ Կ. Պոլիս նորերումս հասած Արեգդին-փաշայի եղբայրը ներկայ էր այդ ժողովին և շուտով ուղեւորվեցաւ, ինչպէս պատմում են, Սկուտարի գաղտնի յանձնաբարութեամբ։ Այդտեղ նա կը տեսնվի չորս անուանի այրանցիների հետ, որոնցից երկուսը մահմեդական, մի կաթոլիկ և մի ուղղափառ քրիստոնեայ է և որոնց հետ միասին կուղեորվի Հոմսի Հումբերտ թագաւորին ներկայանալու համար։ Բացի այդ վերջին ժամանակներում Արեգդին-փաշա և իտալական դեսպան կոմս Կորտի շուտ շուտ գաղտնի խորհրդաժողովներ են ունենում։ Այրանցիները այստեղ բացարձակ գինւորներ են հաւաքում։ Իւրաքանչիւր մարդ թիւրքական մի լիրա է ստանում և առանձնաշնորհներ ճանապարհի համար։ Այրանցիները գլխաւորապէս Նանինա են ուղեւորվում, որտեղ մահմեդականների և յոյների մէջ կռիւ է սպասում։ Յուլիսի 5-ին «Վակիթ» լրագիրը խորհուրդ էր տալիս իրագործել Զերնոգորիայի հետ ապրիլի 12-ին կապած դաշնագրութիւնը, որովհետև նա կայացել է Խոտիլայի միջնորդութեամբ։ Այրանցիներին խորհուրդ է տալիս չընդդիմանալ այդ դաշնագրութեանը և անօգուտ կերպով չը թափել այրանական արիւնը և չը բաժանել այրանական օյժերը, որոնք հակաւոր են թիւրքաց կայսրութեան կենսական շահերը պաշտպանելու համար։ Այրանական առաջնորդներից մէկը խորհուրդ է տուել թիւրքաց կառավարութեանը բոլորովին չը խանգվել նրանց գործերի մէջ, որովհետև ինքը միութիւնը կարող է իր գործերը կարգադրել։ Սուլթանը որ գնահատում է իր հեղինակութիւնը, չը հաւանեց այդ խորհուրդը։ Մի և նոյն պատճառով սուլթանը չը հաւանեց Արեգդին-փաշայի կազմած վերանորոգութիւնների նախագիծը Հայաստանի համար և վերջը նրան բոլորովին մերժեց։ Այդ էր պատճառը, որ Բ. Դրան պատասխանը դեսպաններին հայոց խնդրի վերաբերութեամբ բաւական ուշացաւ։ Սուլթանը չէ կամենում Հայաստանին առանձնաշնորհութիւններ տալ և կարծում է, որ եւրոպական մանդատոյվի մշակած նախագիծը նահանգական վերանորոգութիւնների համար, բաւական է Հայաստանին։ Բ. Դրան տուած պատասխանը դեսպաններին այդ բովանդակութիւնն ունի։ Հաւատացնում են, որ սուլթանը ինքը բացարձակ պ. Գօշենին իր այդ հայացքի պատճառները, որոնք հակառակ են պետութիւնների պահանջին, որ Հայաստանին բացառական գրութիւն տրվի։ Սրանից յետոյ կարելի է կասկածել թէ ինչն էր դրդում թիւրքաց կառավարութեանը անդադար հետաձգիներ հրատարակել, իբր թէ Հայաստանի մէջ ամէն բան հանգիստ է և կարգի է բերված։

---

## ԹԻՒՐՔԻԱ

—

Նանինայից «Polit. Corresp.» լրագրին գրում են յունիսի 25-ից Եպիրոսի գործերի դրութեան մասին հետեւեալը։

Ա.յս շաբաթվայ սկզբին հասան այստեղ անգլիական պլանոր շարի երկու օֆիցիներներ, որոնք դեռ մինչև այժմ այստեղ են։ Այստեղ հասնելուց յետոյ նրանք խնդրեցին իրանց մօտ անուանի յոյներին, թէ վերջինի մտրաքաղաքից և թէ շրջաններից երկու երկու մարդ և մանրամասնաբար հարցրին նրանցից երկրի գործերի մասին և նոյնպէս նրա մասին, թէ Եպիրոսի միացնելը Ցունաստանի հետ արդեօք նրանց ցանկութիւնների համեմատ է, թէ ոչ։ Պատասխանի մասին անկարելի էր երկիւղիլ։ Նրանք ամենքը պատասխանեցին, որ իրանց երկրի միացնելը Ցունաստանի հետ վերլսելով բոլոր բնակիչների ամենաջերմ ցանկութիւնն է կազմում։ Բայց անգլիացի օֆիցիներները չը կամեցան կոմիսարահ լինել և հրաժարեցին իրանց մօտ չորս անուանի թիւրքերին, իւրաքանչիւր քաղաքից երկուսին և այրանական տարրից։ Եպիրոսի քաղաքների ներկայացուցիչները Մէյդրեդին-փաշա և Մուստաֆաբէյ էին, իսկ այրանցիների կողմից յայտնի մոլեռանդ Արգուրէյ Ֆազարլիս և Նակի-բէյ։ Բրիտանական օֆիցիներները նրանց էլ մանրամասնաբար հարց ու փորձ արին և յետոյ հարցրին, թէ նրանք ինչպէս կը վարվին, եթէ սուլթանը մի լրատեր կուղարկի և կը յայտնի, թէ յիշեալ երկիրը զիջած է Ցունաստանին։ Թիւրքերը պատասխանեցին, թէ այդ լրատերին նրանք խսկոյն կը սպանեն, որովհետև թիւրքերը վնասել են գլխովին ջարդվել, քան թէ թողնել, որ Եպիրոսի գոնեա մի մասը Ցունաստանի հետ միանայ։ Վերջը թիւրքերը խնդրեցին օֆիցիներներից, որ նրանք իրանց այդ վճռողական պատասխանը հաղորդեն անգլիական թագաւորական կառավարութեանը։ Ինչպէս երևում է անգլիացի օֆիցիներները ստացել են նոյնպէս պատերազմական յանձնարարութիւններ, որովհետև նրանք մանրամասնաբար քննում են թէ այստեղի ամրոցը և թէ հարեւան պատերազմական ամրացած դիրքերը։ Այրանցիները և առհասարակ մահմեդականները, տեսնելով, որ Բերլինում ոչ թէ միայն որոշեցին յոյն-թիւրքական նոր սահմանները, այլ և Ցունաստանին տուին Պրիվեզա և Նանինա, շատ անհանգիստ են եղել և ընդդիմանալու համար գործ են անում բոլոր միջոցները։ Այրանիայի իւրաքանչիւր գիւղը հեռագիր է ուղարկված և օգնութիւն է խնդրված։ Հաստատ աղբիւրներից տեղեկացայ, որ Այրանիայի բազմաթիւ գիւղերից խոստացել են անպաղաղ օգնութիւն հասցնել։ Եթէ մեծ պետութիւնները դրականապէս չեն իրագործի Բերլինի կոնֆերենցիայի վճիռը, Ցունաստանը իրան յատկացրած երկիրները կարող է ստանալ միայն մեծ արիւնհեղութեան գնով։

Նոյն լրագրին գրում են Լօնդոնից։

Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները իրանց մէջ բանակցութիւններ են սկսել, թէ ինչ միջոցներ պէտք է գործադնել կոնֆերենցիայի վճիռները իրագործելու համար։ Նաւատորմիների թիւրքաց ջրերը ուղարկելը աչինչ չի օգնի, որովհետև վերջին տարիների փորձից երևաց, որ օտար պետութիւնների նաւատորմերի ներկայութիւնը Դարդանելի մէջ բաւական չէ Բ. Դրանը խելքի բերելու համար։ Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները սկզբունքով համաձայն են նաւատորմիներ ուղարկելու մասին, բայց մի հարց է բարձրանում, ինչ պէտք է անել, եթէ այդ միջոցը անգործնական կը լինի և ոչինչ ազդեցութիւն չի ունենայ թիւրքաց կառավարութեան վրա։ Թագաւորը Լօնդոնում յայտնել է անգլիական կառավարութեանը, որ յունական զօրքերը իրանք կը գրաւեն Ցունաստանին տուած երկիրները, եթէ թիւրքիան նրանց կամաւորապէս չի տայ, բայց այստեղ մի կողմից կարծանան յայտնել թիւրքաց զօրքերին և այրանցիներին, միւս կողմից պետութիւնները իրանց պարտաւորութեան յետաձգելը պահանջել են անգլիական և ֆրանսիական դեսպանները։ Դրանից երևում է որ անհիմն են վերջին ժամանակներում տարածված այն բոլոր լուրերը, իբր թէ Ֆրանսիան չէ կամենում Բ. Դրան վրա զորնական ճնշումն անել։ Ցունական հարցի մէջ Ֆրանսիան այլ ևս չէ կարող յետ մնալ մանաւանդ այն պատճառով, որ այդ հարցը ինքն է բարձրացրել և կոնֆերենցիայի որոշած սահմանները բոլորովին համեմատ են Ֆրանսիական նախագծին։

---

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

Ս ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յուլիսի։ Պաշտօնապէս հրատարակված է Դարսի և Բաթումի մէջ քաղաքային երեք դատաւորներով ուսումնարաններ բանալ, իսկ Թեմիր-Խան-Շուրայի պրոգիմնազիան ռեալական ուսումնարան դարձնել։

ՍԻՄԼԱ, 10 յուլիսի։ Արգուրխանի տեսութիւնը անգլիացիների հետ կրկայանալ անգլիական բանակի մէջ Կարուլից 14 մղոն հեռաւորութեամբ։ Էյլիբ-խանի զօրքերը հասան Գիլմանդ գետին, Գիրշկիից 12 մղոն հեռաւորութեամբ։ Նրանց հետ միացան փախստական շատ զինուորներ։ Բերրաու տեղափոխեց իր բանակը Գիրշկիին երեք մղոն մօտ։

Կ ՊՕԼԻՍ, 10 յուլիսի։ Զերնոգորիայի իշխանը հրաժարվիցաւ ընդունել Բ. Դրան առաջարկութիւնը նշանակել մասնաժողով այրանցիների յարձակումը քննելու համար և պատուիրեց Զերնոգորիայի հաւատարմատարին դուրս գալ Կ. Պոլսից։

Կ. ՊՕԼԻՍ, 11 յուլիսի։ Թիւրքաց միխարների խորհուրդը այսօր ընդունեց Բ. Դրան պատասխանը պետութիւնների ընդհանուր գրութեանը։ Այդ պատասխանով Բ. Դուռը առաջարկում է պետութիւններին ընդունել սկզբունքով, որ Լարիսա, Նանինա, Մեցկովոն Թիւրքիային և խնդրում է այդ ուղղութեամբ բանակցութիւններ սկսել։ Ռուսաց դեսպան Նօվիկով պահանջից Վելի-Մահմեդի մահուան պատիժը։

ԼՕՆԴՈՆ, 11 յուլիսի։ Պաշտօնապէս հաղորդում են, որ Արգուրխանի էմիր է յայտնված։

Վ.ԻԵՆՆԱ, 11 յուլիսի։ Բոլոր պետութիւններից համաձայնութիւն է ստացվել զինուորված ցոյցեր զորձել թիւրքաց ափերի վրա եթէ Բ. Դուռը պետութիւնների ընդհանուր գրութեանը բացասական պատասխան տայ։ Մոտային ցոյցերի պատճառը կը լինեն յունական և չերնոգորիական հարցերը։ Սերբիայի թագուհին վտանգաւոր կերպով հիւանդ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յուլիսի։ Զինական դեսպանատունը Պետերբուրգի մէջ մարիկ Ցգենգից պաշտօնական տեղեկութիւն ստացաւ, որ նա կը հասնի Պետերբուրգ եկող շաբաթվայ վերջին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէք 94$^{3}/_{8}$ ր., երկրորդ 92$^{1}/_{8}$ ր., երրորդ 93 ր., 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր., 50 կ., երկրորդ 223 ր., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75, կ., երկրորդ 91$^{3}/_{8}$ ր., երրորդ 91$^{1}/_{8}$ ր., ոսկի 7 ր. 77 կ.։ Ռուսաց 1 բուլ Լօնդոնի վրա արժէ 25$^{3}/_{8}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 216 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 267 ֆր. 25 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է։

---

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ